ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզի «Ազատաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զինղեկի (0,5 դրույք),ֆիզիկայի (4 դասաժամ), անգլերենի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է
ներկայացնել՝ - դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4
չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ
(դիպլոմ), - անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում), - ինքնակենսագրություն (Ձեւ 5), - այլ պետությունների քաղաքացիները՝

ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում), - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են **2022 թ. հունվարի 19-ից մինչեւ 2022 թ.փետրվարի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:** Մրցույթը տեղի կունենա **2022 թ. փետրվարի 4-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Արարատի մարզի Ազատաշենի հիմնական դպրոցում,հասցեն՝ գ. Ազատաշեն, 3-րդ փ., 1-ին փակուղի,հ. 4: Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 57-77-04 հեռախոսահամարով: